ԿԱՐԾԻՔ

ԱՐՄԻՆԵ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՈԼԻԹ-ԷՆԵՈԼԻԹՅԱՆ ԽԵՑԵՂԵՆԸ
(ըստ Արարատյան դաշտի Ակնաշեն և Առատաշեն
բնակատեղիների նյութերի)»

թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքի արդիկանությունը

Վերջին տարիների հետազոտությունների արդյունքում կարևոր տվյալներ են ի հայտ եկել Առաջավոր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում առաջին մշտական բնակավայրերի և արհեստագործական արտադրանքի առաջացման վերաբերյալ: Այս համատեքստում հատկապես կարևորվում է խեցեգործության առաջացման և սկզբնական զարգացման հարցը, որին էլ նվիրված է Արմինե Հարությունյանի «Հայաստանի նեոլիթ-էնեոլիթյան խեցեղենը» վերնագրով ատենախոսությունը: Քանի որ խնդիրը նման ծավալով, միջմասնագիտական մեթոդաբանությամբ ու համապատասխան խոր հարցադրումներով երբեք չի քննարկվել հայ իրականության մեջ, ուստի ատենախոսությունն իր նշանակությամբ կարելի է համարել շատ արդիական:

Հետազոտության կառուցվածքը, բովանդակությունը, շարադրանքը

Ընդհանուր առմամբ 282 էջից (որից 118-ը տեքստն է) բաղկացած ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից (243 միավոր), նկարներից (55 միավոր) և դրանց ցանկից, աղյուսակներից և դիագրամներից (55 միավոր), ինչպես նաև հավելվածներից (4 միավոր), որտեղ տրված են աշխատության մեջ ներկայացված տեղական և ներմուծված խեցեղեն բեկորների մանրամասն նկարագրությունները, պետրոգրաֆիկ վերլուծության ընդհանրացված տվյալները, վիզուլ հետա-զոտության ենթարկված խեցեղեն նմուշների տվյալների շտեմարանը:

Հետազոտության համար հիմք են հանդիսացել Արարատյան դաշտում գտնվող Առատաշեն և Ակնաշեն նեոլիթ-էնեոլիթյան հնագիտական հուշարձանների խեցեղեն նյութը, ինչպես նաև՝ Մասիս բլուր, Ծաղկունք, Ադաբլուր (Հայաստան) և Արուխլո, Շուլավերիգորա (Վրաստան) հուշարձանների հարակից նյութերը: Ք.ա. VI հազ. առաջին կեսի Հայաստանի նեոլիթը ներկայացնող հիշյալ հուշարձանները ներկայումս կենտրոնացած են բացառապես Արարատյան դաշտում և բնորոշվում են նյութական մշակույթի և տնտեսության նույնանատիպ առանձնահատկություններով: Դրանք Հայաստանի տարածքի առաջին բնակավայրերն են, որոնց հիմքում ընկած է արտադրական տնտեսաձևը՝ բնակարանաշինության և խեցեղենի արտադրության առաջին փաստագրված օրինակներով: Այս հուշարձաններից պեղված հնագիտական նյութի ուսումնասիրությունը բացահայտում է բարձր աստիճանի մշակույթին հարազատություն Կուրի ավազանի համաժամանակյա հուշարձանների հետ, ինչը հիմք է հանդիսանում «Առատաշեն-Շուլավերի-Շոմութեփե» ավանդույթի կամ մշակույթի սահմանման համար: Ներկայումս Արարատյան դաշտի Առատաշեն և Ակնաշեն բնակավայրերի ուշ նեոլիթ/վաղ խալկոլիթյան շերտերում հայտնաբերված խեցեղեն նմուշները Հարավային Կովկասի խեցեղեն արտադրության հնագույն օրինակներն են: Սույն հետազոտությունը նվիրված է հիշյալ խեցեղենի տարատեսակ առանձնահատկությունների վերլուծությանը:

Աշխատանքը շարադրված է պարզ լեզվով և ավելորդ բառերի ու արտահայտությունների բացակայությամբ բնորոշվող լակոնիկ ոճով: Հեղինակի ձևակերպած մտքերը հասկանալի են, եզրակացությունները համապատասխանում են բովանդակությանը: Առկա աղյուսակները և դիագրամները արտացոլում են հեղինակի վերլուծությունները և դրանց հիման վրա արված եզրակացությունները:

Ատենախոսության ձևավորումն իրականացված է արհեստավարժ ոճով: Կատարված ուսումնասիրության արդյունքում ի մի են բերված առկա հիմնական տվյալները, որոնց միջոցով ընդհանուր՝ որակական և քանակական պատկեր է ստացվում Հայաստանի նեոլիթ-էնեոլիթյան հասարակության խեցեղեն արտադրանքի և ընդհանրապես հասարակական զարգացումների տարբեր առանձնահատկությունների վերաբերյալ:

Աշխատանքի հիմնական արժեքը

1. Քննարկվող աշխատության մեջ առաջին անգամ ուսումնասիրվում է Հայաստանի նեոլիթ-էնեոլիթյան խեցեղենը՝ դրա տիպաբանությունը, պատրաստման տեխնոլոգիական շղթան, հումքի հնարավոր աղբյուրները։

2. Աշխատանքում օգտագործվում է ինչպես համեմատական տիպաբանական և տեխնոլոգիական հնարքների վիզուալ դիագնոստիկ մեթոդները, այնպես էլ մի շարք բնագիտական մեթոդներ (278 բեկորի պետրոգրաֆիկ անալիզ, կավե հումքի քիմիական և ռենտգեն անալիզներ)։ Այս իմաստով աշխատանքը ժամանակակից միջմասնագիտական հետազոտության փայլուն օրինակ է:

3. Առկա տվյալների հիման վրա ստեղծվել է մանրամասն շտեմարան՝ համապատասխան նկարագրություններով: Քանակական վերլուծությունները արտահայտվում են բազմաթիվ ցանկերով և դիագրամներով: Այս ամենի արդյունքում հնարավոր է դառնում խոսել խեցեղենի կայուն և փոփոխական հատկանիշների հարաբերակցության մասին: Խեցեղենի ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշել այս կամ այն հատկանիշի տարածվածությունը, համատեղ հանդիպման հաճախակա-նությունը՝ վեր հանելով մի շարք օրինաչափություններ։ Նման ոճի աշխատանք մեզ հայտնի չէ հայ հնագիտության մեջ և այս իմաստով այն ակնհայտ գիտական նորույթ է, իսկ աշխատելաոճով լիովին համապատասխանում է միջազգային ստանդարտներին:

4. Աշխատանքում շրջանառվում են չհրատարակված բազմաթիվ նյութեր: Այս մանրամասնությամբ հանդերձ ակնհայտ է, որ այն տվյալ թեմային նվիրված առաջին ամփոփ աշխատանքն է:

5. Հեղինակի կողմից ի մի բերված տվյալները քննարկվող աշխատանքը վերածում են յուրահատուկ հանրագիտարանի կամ նույնիսկ դասագրքի, որտեղ հնարավոր է փնտրել և գտնել խեցեղենին վերաբերող տարբեր հարցերի պատասխաններ:

6. Ատենախոսը շատ լավ ծանոթ է առկա գիտական գրականությանը և գիտական աշխատանքները հղում է տեղին ու բարեխղճորեն՝ ելնելով համապատասխան էթիկայի կանոններից:

7. Առանձին խնդիրների կապակցությամբ հեղինակն առաջարկում է նոր, ուշագրավ և հավանական մեթոդներ և տեսակետներ. դրանցից

կհիշատակեինք, օրինակ, խեցեղեն գտածոների տարածական անալիզն՝ ըստ շերտերի և միավորների, որն առաջին անգամ է կիրառվում հայ հնագիտության մեջ: Եթե սրան ավելացնենք նաև խեցեղենի հումքի աղբյուրների սահմանումները, ապա կստացվի, որ հեղինակը լուծում է իր առջև դրված գրեթե բոլոր խնդիրները:

Դիտողություններ և առաջարկություններ

1. Խեցեղենի վերլուծությունից ստացված տվյալները կարելի է հետագայում ավելի մանրամասն քննարկել նեոլիթյան հեղափոխության, դրա արդյունքում ձևավորված սոցիալական զարգացումների, «անոթներ և մարդիկ» (“potts and peoples”) հարցադրման համատեքստում (թեև պարզ է, որ հեղինակի խնդիրն ատենախոսության սահմաններում հստակ է և վերաբերում է բուն խեցեղեն արտադրանքին):

2. Նախաբանում շարադրված ուսումնասիրության պատմության մեջ կարելի էր հիշել Ռ. Թորոսյանի, Հ. Մարտիրոսյանի, Է. Խանզադյանի անունները: Հետագա աշխատանքի ընթացքում կարելի է օգտագործել նաև Ռ. Թորոսյանի արխիվային նյութերը, որոնք գտնվում են Էջմիածնի պատմա-ազգագրական թանգարանում: Կառաջարկեինք ուսումնասիրության պատմության տեսանկյունից հիշատակել «Հայկական ճարտարապետության պատմության» 1-ին հատորը (Երևան, 1996, Գ. Արեշյանի հոդվածը), Г.М. Мунчаев, Кавказ на заре бронзового века, Москва, 1975; К.Х. Кушнарева, Т.Е. Чубинишвили, Древние культуры Южного Кавказа, Москва 1970; К.Х. Кушнарева, Южный Кавказ в IX-II тыс. до н. э., Петербург 1993 գրքերը (թեև դրանք ուղղակիորեն խեցեղենին չեն վերաբերում):

3. Գրականության ցանկում գրքերի վերջում էջերը բացակայում են, Գրականության ցանկում անգլերեն միավորների առաջին տառերը հիմնականում մեծատառ են, բայց երբեմն այդ սկզբունքը խախտվում է (օրինակ՝ Connan, J. et al. 2004. Bitumen in Early Ceramic Art: bitumen painted ceramics from Late Neolithic Tell Sabi Abyad (Syria). Archaeometry 46/1, 115–124; Ericson J.E., Stickel E.G. 1973. A proposed classification system for ceramics. World Archaeology, Vol. 4, No.3, Theories and Assumptions, 357-367, ևն): Ինտերնետային հղումներում սովորաբար նշում են ներբեռնման օրը (օրինակ՝ դրանք կարող էին նշվել էջ 23-ում՝ Каолинит...

Stein, G. 2009-2010. Tell Zeidan annual report (http://oi.uchicago.edu /pdf/09_10_Zeidan.pdf) դեպքերում):

4. Ինչ վերաբերում է հավելվածներին՝ Նկար 8, 12, 14-ում գրվածքներն անգլերեն են, կարելի էր դարձնել տեքստի լեզվով՝ ռուսերեն: Նկար 53-54-ում և այլ նկարներում մասշտաբները տարբեր են, ճիշտ կլիներ դրանք միատեսակ դարձնել: Օգտակար կլիներ խեցեղեն տեսակների և հատկանիշների (օրինակ՝ հալաֆյան կամ սամարայի խեցեղենի) տարածական քարտեզները (Հայկական լեռնաշխարհ-Կովկաս-Առաջավոր Ասիա հուշարձանների ընդգրկմամբ):

5. Աշխատանքում առկա են որոշ վրիպակներ (էջ 120՝ Мунчаев, Мерперт 1981: 237, Рис. 83: 4;-ը պետք է լինի առանց ;-ի; էջ 122՝ Նավասարդյան Ք. 1994, Հայաստանի մ.թ.ա. II-րդ հազարամյակի խեցեղենի արտադրության տեխնոլոգիական սխեմաների մասի.. պետք է լինի մասին; էջ 108, 118 Korfman՝ պետք է լինի Korfmann; ներմուծված խեցեղեն (импортная керамика) հասկացությունը տեքստի տարբեր հատվածներում տրվում է մերթ չակերտներով, մերթ՝ առանց չակերտների. անհրաժեշտ է միասնականացնել):

Եզրակացություն

Վերոհիշյալ դիտողություն-առաջարկները հիմնականում տեխնիկական բնույթի են և հեշտությամբ կարող են լրացվել: Իրականում քննարկվող ատենախոսությունը երկարատև և տքնաջան աշխատանքի արդյունք է և կարևորագույն ներդրում Հայկական լեռնաշխարհի, Կովկասի և Առաջավոր Ասիայի հնագույն հասարակությունների նյութական մշակույթի հետազոտության բնագավառում, իսկ հեղինակը լիովին արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ պ.գ.թ. Արսեն Բոբոխյան

Արսեն Բոբոխյանի ստորագրությունը հաստատում եմ
Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտ. քարտուղար Աստղիկ Բաբաջանյան

Երևան, 02.12.2024 թ.